



Կարծրատիպ, որը վնասում է հոգեբուժական հաշմանդամություն ունեցեղներին

Արդյոք «բռնության հակված մտավոր հիվանդ»
ձեռակերպումը՝ միֆը, կարո՞ղ է վնասել մարդկանց

Այո, մարդիկ հաճախ խուսափում են ապրել կամ շփվել հոգեկան առողջության հետ խնդիրներ ունեցող անհատների հետ, քանի որ կարծում են, թե նրանք վտանգավոր են եւ հակված բռնությունների: Արդյունքում նման մարկանց համար հաճախ չի ապահովվում բնականոն կենսագործունեության, զբաղվածության եւ սոցիալական կառույցների հետ շփվելու հնարավորությունը: Հոգեբուժական խնդիրներ ունեցող յուրաքանչյուր երրորդ մարդ չի կարողանում աշխատանք գտնել, երբ պարզվում է նրա ունեցած հիվանդությունը: 2000 թվականին Կալիֆորնիայում բնակվող 75000 հոգեհաշմանդամների հնարավոր չի եղել ապահովել անհրաժեշտ կենսապայմաններով: Խարազանման եւ խտրականությունների արդյունքում մարդիկ կորցնում են ինքնավստահությունը, նրանք հաճախ հուսալքվում եւ մեկուսանում են:

Արդյոք այս կարծրատիպը խրախուսվո՞ւմ է մամուլով

Այո, հեռուստատեսային շատ ալիքներով հոգեկան առողջության հետ խնդիրներ ունեցող կերպարները հաճախ պատկերվում են որպես

ամենավտանգավոր անձինք: 1999 թվականին իրականացված մի հետազոտությունն պարզել է, որ վերը նշված կերպարները 60%-ով ներկայացվել են որպես հանցագործներ եւ բռնարարքների հեղինակներ: 2005 թվականին թերթերի վերլուծությունը եզրակացրել է, որ հոգեկան հիվանդությունների վերաբերյալ հրապարակված նյութերի 39%-ում պնդումներ են եղել վտանգի եւ բռնության մասին: Փոքրաթիվ են խնդրի վերաբերյալ դրական պատմությունները, որոնց միջոցով պատմվում են հոգեկան առողջության խնդիրներով անձանց եւ նրանց ընտանիքների բուժվելու դեպքերը:

Արդյոք հանրությունը հավատո՞ւմ է այս կարծրատիպին

Մեծամասամբ այո: Ամերիկացիների մեծ մասը համոզված է, որ հոգեկան խնդիրներ ունեցողները վտանգավոր են հասարակության եւ անձամբ իրենց համար: 1950-ից 1990 թվականների ընթացքում նման կարծիք ունեցողների թվաքանակը Միացյալ Նահանգներում կրկնապատկվել է: ԱՄՆ-ի բժշկական ծառայությունների ղեկավարի զեկույցի համաձայն, մամուլը մեծ դերակատարություն ունի հանրային վերաբերմունքի նմանատիպ փոփոխության վրա:

Արդյոք կարծրատիպը հերքվե՞լ է

Այո, բռնության եւ հոգեկան առողջության վերաբերյալ արված հետազոտությունները հավաստում են, որ հոգեբուժական խնդիրներ ունեցողների բռնության կիրառման դեպքերը փոքրաթիվ են: Ի հակակշիռ մամուլի եւ կարծրատիպային մտածողության, 2009-ին Կալիֆորնիայում արված զեկույցի համաձայն «հոգեկան հիվանդություններ ունեցողներն ավելի հաճախ բռնության զոհեր են դառնում, քան բռնարարքի հեղինակներ»:

Ի՞նչ ճշմարտություններ հոգեկան հիվանդությունների ոլորտում

1999 թվականին Միացյալ Նահանգների բժշկական ծառայությունների ղեկավարի կողմից հրապարակված զեկույցում նշվում է հետևյալը.
«Խարազանումը լրջագույն խոչընդոտն է հոգեկան առողջության ոլորտում առաջընթաց արձանագրելու տեսանկյունից»: Այս առումով դրական է այն, որ հոգեկան հիվանդություններ ունեցող մարդիկ կարող են եւ հիմա էլ բուժվում են եւ կարող են շարունակել առողջ կենսագործունեությունն իրենց համայնքներում:

Ինչն է կարելուր հոգեկան հիվանդություններից վերականգնվելու գործընթացում

Համայնքը կարելուր նշանակություն ունի հիվանդություններից վերականգնվելու գործընթացում, ինչպես նաեւ ընտանիքը, ընկերական միջավայրը, հոգեւոր առաջնորդները, գործընկերները եւ այլն: Մարդիկ հաճախ կարող են հաջողությունների հասնել քննարկումների եւ խոսակցությունների միջոցով, ինչպես նաեւ վերականգնմանը միտված ծրագրերի մասնակցելով: Ի հակակշիռ մամուլի կողմից ստեղծվող կարծրատիպերի հարկ է նշել, որ անցյալում հոգեկան հիվանդություն ունեցած մարդիկ դրական ներդրում ունեն հասարակության զարգացման տեսանկյունից:

Որտեղից կարելի է ստանալ խտրականության եւ հասարակական մեկուսացման դեմ պայքարի համար տեղեկատվություն

Դուք կարող եք կապվել հոգեկան առողջության հանրային ներգրավման, արժանապատվության, ընդունման խրախուսման դաշնային ռեսուրս կենտրոն-ի հետ «Resource Center to Promote Acceptance, Dignity, Social Inclusion Associated with Mental Health (ADS Center)». Սա մի ծրագիր է, որն իրականացվում է ԱՄՆ-ի առողջապահության եւ սոցիալական հարցերով նախարարությունը Substance Abuse and Mental Health Services Administration (SAMHSA), Center for Mental Health Services:
Web: <http://promoteacceptance.samhsa.gov>
Էլեկտրոնային հասցե: promoteacceptance@samhsa.hhs.gov

Հեռախոս: 800-540-0320

Դուք կարող եք կապվել նաև Disability Rights California

կազմակերպությանը

Web: <http://www.disabilityrightsca.org>

Էլեկտրոնային հասցե: info@disabilityrightsca.org

Հեռախոս: 800-776-5746

Դուք կարող եք կապվել նաև NAMI California կազմակերպությանը

Web: <http://www.namicalifornia.org/>

Էլեկտրոնային հասցե: nami.california@namicalifornia.org

Հեռախոս: 916-567-0163

Մեզ համար կարևոր է Ձեր կարծիքը: Փաստերի այս շարքը կարդալուց հետո խնդրում ենք մասնակեցել մեր հարցմանը:

Անգլերեն <http://fs12.formsite.com/disabilityrightsca/form54/index.html>

Իսպաներեն <http://fs12.formsite.com/disabilityrightsca/form55/index.html>

Խարազանելը, խտրականությունը, խտրականության կրճատման եւ հաջող քաղաքականության ծրագիրը (APEDP) ֆինանսավորվում է հարկատուների կողմից հաստատված հոգեկան առողջության ծառայությունների մասին օրենքով եւ կառավարվում Կալիֆորնիայի առողջապահական հարցերով վարչակարգի կողմից (CalMHSA): CalMHSA-

ը մարզային ավագանիներից բաղկացած կազմակերպություն է, որը գործունեություն է ծավալում հոգեկան առողջության խնդիրներ ունեցողներին, ընտանիքների եւ համայնքներին աջակցելու ուղղությամբ: Կազմակերպությունը մատուցում է ծառայություններ, ինչպես նաեւ կրթական ծրագրեր է իրականացնում նահանգային, տարածաշրջանային եւ տեղական մակարդակներում: Լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք այցելել <http://www.calmhsa.org> կայքը:



WELLNESS • RECOVERY • RESILIENCE